Բժշկական ազատում ստանալը.
Ծնողների և բժիշկների ուղեցույց

Դպրոց և երեխայի խնամքի հաստատություն մուտք գործելու նոր բժշկական ազատումները պետք է տրվեն California Immunization Registry - Medical Exemption (CAIR-ME) կայքէջով (cair-me.cdph.ca.gov).

Բժշկական ազատումները կարող են տրվել միայն բժիշկների կողմից (MD-ներ կամ DO-ներ), ովքեր լիցենզավորված են Կալիֆոռնիայում և պետք է բավարարեն Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման գործող կենտրոնների (CDC), Պատվաստման հարցերով խորհրդատվական կոմիտեի և Մանկաբույժների ամերիկյան ակադեմիայի (AAP) չափանիշներին:

Դպրոց և երեխայի խնամքի հաստատություն մուտք գործելու համար բժշկական ազատում ստանալը.

1. Ծնողը ստեղծում է հաշիվ CAIR-ME (**cair-me.cdph.ca.gov**) կայքէջում և դիմում է ազատման համար: Նրանք կստանան բժշկական ազատման դիմումի համարը:
2. Բժշկական ազատում խնդրելու հրահանգներ **(bit.ly/MERequestHowTo)**
   Բժշկական ազատումն իսպաներեն լեզվով խնդրելու հրահանգներ **(bit.ly/SpanishMERequestHowTo)**
3. Ծնողը տրամադրում է բժշկական ազատման դիմումի համարը երեխայի բժշկին:
4. Եթե բժիշկը չունի CAIR-ME հաշիվ, բժիշկը գրանցվում է CAIR-ME համակարգում, հետո մուտք է գործում, որոնում է երեխային և տրամադրում է բժշկական ազատումը:
5. Բժշկական ազատումը տրամադրելուց հետո բժիշկը ծնողներին է տալիս բժշկական ազատման **տպագիր** կամ **էլեկտրոնային պատճենը:** Ծնողները չեն կարող տպել բժշկի կողմից տրամադրած ազատումը:
6. Ծնողը բժշկական ազատման պատճենն ուղարկում է դպրոցին կամ երեխայի խնամքի հաստատություն:
7. Դպրոցը կամ երեխայի խնամքի հաստատությունը հաստատում է, որ բժշկական ազատումը բավարարում է անհրաժեշտ պահանջները՝ ապահովելով, որ ազատման մեջ առկա տեղեկատվությունը ճիշտ է և ստուգում է կարգավիճակը CAIR-ME համակարգում:

Նշում. *CAIR-ME համակարգով բոլոր նոր բժշկական ազատումները տրամադրելու պահանջը ներառում է ազատումներ այն երեխաների համար, ովքեր ունեն ջրծաղիկի փաստաթղթավորված հիվանդություն:*

Ռեսուրսներ.

Պատվաստումներ դպրոցի համար կայքէջ **(cdph.ca.gov/ShotsForSchool)**
Բժշկական ազատման ՀՏՀ-ներ **(bit.ly/ExemptionFAQs)**

Մանրամասների համար կապվեք այս էլ.փոստով՝ **medicalexemptions@cdph.ca.gov**